

ՊԱՏԱՆՈՂՆԵՐԻ ԿԱՆՈՒՄԸ

Պաշտոնի համար	
Տարեկան	12 Տր.
Վեցուսեայ	6 »
Ա. առանձնակի համար	
Տարեկան	15 »
Վեցուսեայ	8 »
Ա. ներկայի համար	
Տարեկան	3 Տր.
Վեցուսեայ	1.50 »
ՎՃԱՐՆԵՐԸ	

Վանդակի համար 40 սանթրիմ
 և իսկ վերջին երեսի համար
 20 սանթրիմ և ներքին
 20 սանթրիմ գեղարվեստի

Պաշտոնի համար ձեռքի
 ի 15 ՍԱՆԹՐԻՄ
 Վանակի համար ձեռքի 10 սանթրիմ

ՇԱՐՋՈՒՄ

ԼՐԱԳԻՐ ԱԶԳԱՅԻՆ. ՔԱՂԱՔԱՎԱՆ ԵՒ ԳՐԱՎԱՆ

ԵՐ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻ ՉՈՐԵՔԵԱՔԹԻ ԵՒ ՇԱՐՋՈՒՄ

Отговорникъ: Д-ръ Мжгжрдичъ Вартанъ

Վանակի և գրասրահի
 ներդրումներով հասցիով

Редакция на вестникъ
 «Шаржумъ»
 Варна

Redaction du journal
 «Chajoum»
 Varna (Bulgarie)

Վրտարիակ և շին տրուհ

Արտասանակի համար ձեռքի

ի 20 ՍԱՆԹՐԻՄ

Ս. ԳԱՐՐԻԷԼԵԱՆ

Գլխաւոր գործակալ

ՊՈՒԼՎԱՐ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՆԷ ԵՐԱՇ-
 ԽԱՌՐԵԱՆ, ՍՕՅԻՍ. ԿԱՂԱՎԻ ՎԻՃԱ-
 ԿԱԶՄԱՆԻԹԵԱՆ ՏՈՄՍԵՐՈՒՄ:

Տ. մասի գնել փոփոգողները պետք
 է իրեն գիտնել
 2 ս. - Պրիս փողոց

Վանա 2-5

ԱՆՏԵՂԻ ԳԱՆԳԱՏՆԵՐ

Մտածեք փակեցուցիչի մը կամ
 վեղարարի մը ըլլա՞յ արտա-
 սահմանի ըլլա՞յ թուրքի մէջ :
 Սոցիալական յարգանքի բանաձե-
 ւէն ետք՝ պիտի սկսի պաթկալ
 կամաց կամաց կղերականին բեր-
 նէն գանգատներու շարք մը .
 «Չի մնաց. Տիրա, տալի ջերմե-
 ունդ բարեպաշտիկ ժողովուրդը
 եկեղեցիէն պաղծցաւ, կրօնքէն
 ուծացան, աւելի կը նախընտրեն
 կիրակի օրերը սրճարաններու
 մէջ լիցթախողով կամ սնտի
 խօսակցութիւններով ժամանակ
 անցնել, քան թէ գալ մէկ ժամ
 աղօթել և ունկեղբու եկեղեցա-
 կան սրտառու խորհրդա-
 թեանց և հոգեզոյլ շարական-
 ներունի Գալով նորերուն, ախայգ
 նորեր, և բարեպաշտ քանի մը
 լիցթուկ վրայ սնտի թիւններ
 կարգաւոր ինքզինքնին մէջ մէկ
 սկանաւոր գիտուններ կը համա-
 յուն և սառն անտարբերութեամբ
 կը վերսբերուին մեզի հանդէպ :
 Ինչպէ՞ս չի փոփոխուի հին ժա-
 մանակները, որ մեծատունէն
 սկսեալ մինչեւ անանկ աղքատը
 պատկառանքով կը մտենային
 մեզի. առկէ զատ կը շահէինք
 ալ, և իր օրերունը զոցեր է
 սրտին դռները, զոցեր է քա-
 կին բերանը. այս ծաղիկ իսկա-
 պէս կորուստ կը տանի մեզ :
 Եւ, ան հին երանելի օրերը :
 Ահա՛, այսգունակ գանգատնե-
 րու ունկեղբու պիտի ըլլաք ան-
 կասկածօրէն, երբ փո ձուրք մօ-
 տենալ մեր արդի կղերականու-
 թեան բոլոր գեղամօրուս կամ

ալի ներ ներկայացուցիչներուն—
 բացառութեանը շատ ցանցաւ :
 Սակայն տէրպապաներ և վար-
 դապիտներ, շատ ու շատ անիրա-
 էք ձեր գանգատներուն մէջ :
 Հասարակաց պաշտօնեայի մը
 արձանիքը կը կայանայ իր մտա-
 ւորական պաշարին և իր առաջին
 ու նմանը ունեցած պարտա-
 կանութիւններուն անթիւր ու
 խղճամբար կատարման մէջ : Ինչ
 մտաւորական պաշար ունիք դուք
 և ձեր հօտին հանդէպ ունեցած
 ծառայութիւններէն ո՞րը կը կա-
 տարէք խղճամօրէն ամէն օր : Այս
 կրկնակ հարցումներու, ցաւ է
 խոստովանել, բացասական պա-
 սասխան մը տալու տխուր հար-
 կին ներքեւ պիտի գտնուիք դուք :
 Ծառ հասանական է ձեզմէ մէկ
 քանինք բոլոր յանցանքը պիտի
 նետեն ժողովուրդին վրայ, ա-
 ռարկելով որ անկէկ է մեզ ընտ-
 րողը, և թէ արժանի չէինք, ա-
 զատ էր մեզ պաշտօնի չի կոչել :
 Չի ուր առարկութեան համա-
 կարծիք ըլլանք թերեւս, սակայն
 ատով չէք կրնար վարագուրել
 ձեր տգիտութիւնը և ձեր ահա-
 ւոր կոչումին կարեւոր արժանա-
 պատուութեան շնորհիւ թիւնը պար-
 տըլել : Վասնզի սա ևս բացարձակ
 ճշմարտութիւն մըն է թէ՛ կղե-
 րականներու մասնաւորապէս քա-
 հանաներու ընտրութիւնը գրեթէ
 ամէնուրեք այսինչ աղային կամ
 այսինչ շալին քմահաճոյքէն
 կախակալեալ է : Թողունք սակայն
 այս կէտը :
 Իրտեք ձեր գիրքին աւերն
 ըլլալ, աչխոտի սորվեցէք,
 վասնզի աշխարհիս վրայ գրա-
 նուած պաշտօնեաներէն միայն
 դուք էք որ ամենէն սուղի պա-
 րտաւոր մամբ ունիք : Եթէ Սա-
 հակ մը, Մեսրոպ մը, Դեռնդ
 մը ըլլալու ո՞չ կոչումն, ո՞չ ալ
 պատրաստութիւնն ունիք, գոնէ
 ձեր Խաչատուրը եղէք : Պարզ ու
 համեստ քահանայ մըն էր ասի-
 կայ, սակայն իր հօտին օգտա-
 կար ըլլալու ամէն պատրաստա-
 կանութիւն ցոյց տուաւ և չի
 դադարեցաւ իր ինքնաբեր ծառա-
 յութիւնները մատուցանելու ա-
 նոր հոգածու էր աղքատին, միտ-

թարիչ սգաւորին, խնդակից
 ժողովուրդին բարի հակումներուն,
 յաւախից անոր հոգեւոր ու մարմ-
 նաւոր անկումներուն . սիրած էր
 իր պաշտօնը, սիրած էր իր հօտը
 և սիրած էր անկէ : Մեծ ժո-
 ղովրդականութիւն կը վայելէր
 Պաւսայ մէջ : Ամէն տուն անխոր
 բաց էր անոր առջեւ, բա էր նաև
 հարուստին պարարտ քսակնուաղ-
 քատին նիհար քսակը : Վասնզի ա-
 մէն հայ վստահ էր թէ՛ այդ յա-
 ւէտ ողբացեալ քահանային կար-
 կառած ափին մէջ ձգած դրամը
 անկասկածօրէն ցաւ մը պիտի
 ամօքէր, արցունքի կաթիլ մը
 պիտի սրբէր :
 Հայ ժողովուրդը միշտ լաւ վե-
 րաբերում մը ունեցած է թէ՛
 թուրքիոյ և թէ՛ արտասահմանի
 մէջ իր կղերականներուն հան-
 դէպ՝ որոնք օժտուած են հար-
 կասր բարեմասնութիւններով :
 Երէկի Արմաշականները ձեռքէ
 ձեռք կը խլուին, ասոնցմէ ա-
 մենէն ժողովրդականը, Մուշեղ
 վարդապետ, տեսէ՛ք ի՞նչ կրտսէ
 ձեզի նկատմամբ իր հովուական
 թուղթին մէջ, զոր թերեւս չէք
 կարդացած տակաւին :
 «Այդ կոչումով, դուք երկրա-
 կից եղբայրներ, բարոյական նոր
 պատասխանատուութիւն մը ստանձ-
 նեցիք, քանի որ Քրիստոնէու-
 թիւնը յի թական շէնքերէն ա-
 ւելի բարոյականը կը շիմէր, և
 նոխայներու պատարագին կը նա-
 խագասէր անկեղծ ու բարեպաշտ
 սրտերու, հաւատացեալ հոգիներու
 և մաքուր խղճմտանքի զոհը :
 Ի՞նչ օրէն դուք հոգեւոր պաշ-
 տօնեան, աէր հայրը եղաք սե-
 րունդներու ազնուացման, հո-
 գիներու ուղեցոյցը, բազմադար-
 եան զաղտնապահ ժողովուրդին
 ցաւերուն, ընտանեկան յարկե-
 րու տակ պոթկացող ցաւատանջ
 հեկեկանքին, մխիթարիչը որ-
 բերուն և այրիներուն, հաւատք
 ներշնչողը թուրքած հոգիներուն
 և մատակարարը քրիստոնէական
 փրկարար խորհուրդներուն : Այս
 կոչումով, դուք ծանր ու շատ
 ծանր պատասխանատուութեան
 մը տակ կը գտնուիք, ծանր՝
 Յիսուսի խաչին շափ, ու փրկա-

րա՞ն անոր նման : Եթէ ունենաք
 անոր գիտակցութիւնը և ձեր
 կողմէն փոյթ ընէք անթերի կա-
 տարելու ձեր պարտաւորութիւն-
 ները, այն ասան երանելի պիտի
 ըլլաք դուք :
 Ահա՛ այս երանելին ըլլա-
 լու բազմաքին զարթունմը ձեր
 մէջ տնտեսի կը փոփաքի ու կը
 պահանջէ միանգամայն հայ ժո-
 ղովուրդը, նամանաւանդ հոսար-
 տասահմանի մէջ, ո՞վ փակեցուց
 կամ վեղարուր հայրեր : Այն
 ասան վստահ եղիք թէ՛ ձեր ան-
 տեղի գանգատներուն վերջա-
 կէտը դուք դրած պիտի ըլլաք
 ձեր իսկ ձեռքովը :
 ՀՈՒՐ

ԹՂԹԱՎՅՈՒԹԻՒՆՆԵՐ

ԹԱՐԻՉ, 23 Յունուար

Մօտ ժամանակներս ստացել է
 մի հյովարտակ (ֆէրման), որով
 Արեգականափայլ Մուշեղֆէրէզ-
 գին Շահն-շահը իր հպատակ հայ
 ազգաբնակչութեան ազատ իրա-
 ւունք է շնորհում Պարսկաստանի
 բոլոր նշանաւոր քաղաքներում
 և գաւառներում ամէն կարգի
 դպրոցներ հիմնելու, և այդ
 դպրոցները իր բարձր հովանա-
 ւորութեան տակ առնելով՝ հրա-
 մայում է իր բոլոր պաշտօնեա-
 ներին ամէն տեսակ օգնութիւն
 ու աջակցութիւն ցոյց տալ այդ
 նուիրական գործին : Պարսից
 Շահը շրջելով Երոպական լուսա-
 ւոր աշխարհները, զգաց որ իր
 տէրութեան յառաջդիմութեան
 համար պակասում է մի մեծ բան՝
 «կրթութիւն», իսկ դրա համար՝
 կրթական հաստատութիւններ :
 Ճանապարհորդութիւնից վերա-
 գաւառացի յետոյ, Շահի առաջին
 գործը եղաւ մի քանի երիտա-
 սարգներ ուղարկել Երոպայի
 զանազան քաղաքները ուսանե-
 լու, որպէս զի գան իրանց հայ-
 րենի երկրում գիտութիւն և լոյս
 տարածելու : Այսօր էլ իր հպա-
 տակութեան տակ գտնուած հայ
 ժողովուրդին, որպէս իր երկրի

կուլտուրական տարրին ազատ իրաւունք է շնորհում գիտութեան տաճարներ կառուցանելու, ամէն տեսակ գիւրութեան տարւոյ նրանց և սպասարկութեան խոստանալով: Բայց արդեօք պարտաւորաբար օգտուել իր իրաւունքներին և խրախուսելու ստորութեան արժանիքը գնահատող պետի տաճարապետութեանը: Արդեօք հասկացե՞լ է, որ ներկայ խոսար կեանքի մէջ՝ միայն կրթութեան է այն ճրագն ու լոյսը, որ մեզ պիտի առաջնորդէ դէպի բարին ու օգտակարը:

Ինչպէ՞տ այսօր Պարսկաստանի պատմական քաղաքներում ունինք բաւական թւով երկեսն ու պարոններ, բայց որի՞ համար վստահ կարող ենք ստել, թէ սա արդէն նիւթապէս ապահոված է կամ այս ինչ զպրոցի կրթական գործը տարում է մանկավարժական նորագոյն մեթոտներով, երբեք գարոցները ամէնքն էլ իրանց գոյութեանը քարշ են տալիս մութացկանութեամբ, թատրոններից կամ վիճակախաղերից գոյացած շնչին արգիւքներով կամ որ և է աղայի շնչին ներատուութեամբ: Երբեք համեմատ էլ կրթականն է առաջ գնում: Անկարող լինելով կանոնաւոր, կրթած ուսուցիչներ հրաւիրել, բերում են մի կիսակիրթ կամ աւելի լաւ է ստել անկիրթ տիրացուի յանձնում մանուկներին գատտիարակելու և կրթելու գործը, որ իրանք գատտիարակելու և կրթելու պէտք ունեն: Արդեօք իսկապէ՞ս Պարսկաստանի ժողովուրդը անկարող է գարոցներին նիւթականը ապահովել, թէ կրթութեանը գեւ նրա համար պահանջ չէ գարձել: Եթէ անկարող է, ապա ի՞նչ են անում այդ նպատակով հիմնուած բարեգործական ընկերութիւնները, որ են նրանց ապահոված կրթական հաստատութիւնները: Յաւոք սրտի պէտք է ստել, որ դրանք էլ լոկ անուսով գոյու-

թիւն ունեն, դրանց զեկաւարներն էլ կրթութեան արժէքը ու գնահատութիւնը այնքան են հասկանում, որքան տգէտ ժողովուրդը: այլ կերպ ինչպէս բացատրես թաւրիչի Հայոհեաց Բարեգործական ընկերութեան այժմեան պահած մանկավարժական արհեստանոցը: Ընթերցողը պէտք է անձամբ ներկայ լինէր այդ ընկերութեան զեկաւարներ 23ին նոր դարու առթիւ տաճարեկոյթին, որ համար էր թէ այդ հիմնարկութիւնների վրա ծախուած փողերը կտրած են և ապարդիւն: Մանկավարժները յանձնուած է մի վարժուէն, որ ժողովուրդի ասածի պէս «յօնքը չի նկատ փոխարէն աչքը էլ է հանում»: Պէտք է ր ստանել, թէ ինչպէ՞ս այդ երեկոյթին, 4-5 տարեկան փոքրիկ զեկաւարները քրտնա անօրէն տքնում էին արտասանելու իրանց վարժուէն սովորեցրած «արշինանոց» բառերը: «Երեւեկայութեան» երջանկութիւն, բախտատորութիւն, զիջողութիւն, բառեր՝ որոնք եթէ իրան վարժուէն հարցնէիք պատի պատճառնար արտասանել: Մանուկները մի այսպիսի սրտայայտութիւն «Բախտատորութիւնը համաձայնութեան մէջ է» [1], Իսկ արհեստանոցի մասին խօսելն անգամ աւելորդ է: Նրա տաճ օգուտը գրականապէս ոչինչ է: Կրթական բաժին չունի, իսկ հասարակ կար ու ձեւի համար օրական եթէ ժամ պարապելով խեղճ աղջիկներին երեք սարի շարունակ շարչարում են, որ եթէ աւարտելուց յետոյ գոնէ իրանց հագուստը կտրել իմանան կասե՞նք թէ մի օգուտ ստացել է:

[1] Հիմա էլ սկսել է նոյն 4-5 տարեկան երեխաներին գրել-կարդալ սովորեցնել, մի քան որ 7-8 տարեկան երեխան հարկ կարող է ըմբռնել: Ո՞ր մնաց մանկավարժի գեղը:

Ահա թէ ինչպէ՞ս ի վուր կորչում են հասարակութեան փողերը: Թող հասարկութեանը իր աչքով տեսնի և համարի սր տգէտ զեկաւարներին կամ մանկավարժութեան գործի մասին դադար չունեցող վարժուհիներին յանձնուած հիմնարկութիւնները բնականաբար պէտք է կազան և վերջ ի վերջոյ բնկնեն:

ՄԻՐՉՍ

Փ. ՊՈՒԼԻՍ 15 Յունուար (ՄԵՐ ՄԱՍՆԱՒՈՐ ԵՂՅԱԿԵՆ)

Երբ արտասանական կամ սեւիլի ճիշդ պրոկարահայ մասուլը նոր հաստատուած էր, ամէն կողմէ թղթակցութիւններ կը սեղային իրենց համայնքներուն լաւ կամ զէջ վիճակը պարզող, թէեւ պէտք է խոստովանի որ այդ թղթակցութիւններէն չատերը յաճախ սէքտէրական և արհեստական անմիտ կոնքերու ուրջը կը գտնային: Այսօր, եյր բոլորովին ասոր հակառակ՝ կը տեսնու թղթակցութեանց անվերջ ընդհատումը, կը ստիպուի մասնակի թէ արդեօք գրողները կամ թղթակցները կը թերանան իրենց պարտականութեանց մէջ, թէ հասարակութեանը ստուգելու անշարժութեան մասնուած է ու սեւ է օգտակար գործունէութիւնը ցոյց չի տար, որով թղթակցներն ալ նիւթ չեն ունենար հազարդիւր, ես աւելի առաջին պարագան կը փափաքիմ իրական ընդունել քան թէ երկրորդը: Այսպէս թէ այնպէս, պիտի խնդրէի Շարժումի յարգելի թղթակցներէն, որպէս զի չի ձանձրանան պարբերաբար գրել իրենց միջավայրին աչքի զարնող շարժումներն ու գործունէութիւնները, սրտնը շատ մը օգտակար կողմեր ունենայէ զատ հեռու որ տեղեր ապրող մեր հայրենակիցներուն մէջ ալ շփում պիտի հաստատեն և ետեղի կայծը ընդ միշտ վառ պիտի պահեն: Միեւնոյն ատեն պէտք է նկատի ունենալ որ ալ Ժամանակը անցած է այն իսկ մը գրուածքներուն որոնք, ինչպէս բոլոր անհամ խնդիրներու շուրջը գտնուելով զգուսնք կը պատճառէին ընթերցողներուն:

Հիմա ժողովուրդը տարբեր պէտքեր ունի...

Այս պղտիկ զիտողութենէս վերջ, կու գեմ ակնարկ մը ձգել քաղաքիս գործերուն վրայ:

Չորս ամիսէ ի վեր երգեցիկ խումբ մը ունինք հոս, որ շարաթը երկու երեք անկամ հաւաքուելով, երրորդական ձայնագրութեամբ հայկական երգեր սորվելու կայնատին: Ուրախալի է որ անդամները, քիչ բացառութեամբ, ետեղով ու սիրով կը յարասեւեն, և երրորդական ձայնագրութեան նախնական կանոններու քիչ շատ ծանօթանալէ պատճառով 4-5 երգեր ալ սովորած են, ու հիմա կը փափաքին անդամներու և համակիրների աջակցութեամբ հայկական ներկայացում մը տալ ինպուստ Հայաստանի կարօտեալներուն: Այդ նպատակաւ, յառաջիկայ շարաթ գիշեր յնվ. 20ին, տեղուոյս Վիլիքէլայուրկի թատրոնին մէջ պիտի ներկայացնեն «Բաջն թաթուլ» կամ «Անիի ստումը» Գործունի թատերգութիւնը: Կը յուսամ որ Ֆիլիպիի հայութիւնը ասանց բացառութեան ներկայ պիտի ըլլայ սոյն բարենպաստ գործին համար արուած ներկայացման: Կը խոստանամ ներջայտումն մասին ալ գրել յառաջիկային:

Փանի որ խոսքս թատրոնի մասին է, յիշեմ նաեւ որ ձմեռը անցնելու նպատակաւ «Էջեջ» հայ թերասանական խումբը հոս եկած ըլլալով սկսած է շարք մը ներկայացումներ տալ: Շարաթ մը ատու խումբ մը թատերասէրներու, թատերասէրներու ներկայացում ներանակ կանգնեց անուսած «Երկու անկեղծ բարեկամ յիսնակներ» անուն ընտրի խաղը: Կանխաւ երաջխաւորուածին պէս սրահը ի էր բազմութեամբ, մեծաւ մասամբ հայ, իրօք խմբին յարգելի անդամները ջանք չէին ինչայս ձերկայացումը փայլուն բնելու համար: Տիկ. Տիկ. Մառի և Յակոբեան ու Պ. Պ. Պապեան Պէնիան ու Յակոբեան շատ յաջող գանուեցան: Իրենց զերբուսն մէջ:

Տիկ. Մառի որ ամէն խաղերու մէջ վարժ գերասանի մը սպասուրութիւնը կը թողու. նոյն գիշերն ալ Մարշալի գերին մէջ յաջողակ գտնուեցաւ: Դամանակէ Տիկ. Յակոբեան՝ որ հաւհատակ նոր գերասանութեան սկսած ըլլալուն վարժ գերասանուհի մը սպասուրութիւնը թողուց. այնպէս հաւատացած ենք որ ինք Տիկին Գնարի պակասը պիտի կրնայ գոցել: Պ. Պ. Պապեան և Յակոբեան իրենց գերին տէրը եղան ու քանի մը անգամներ ծափահարութիւններ խեցին:

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ
ԺԱՍ ՄԸ ԵՒՍ
(Է. ՇԻՒՆԻՍ)
Շար. Ասխուրդ քիւնկ)
Հրեշտակն ու երիտասարդը առաւօտեան կանդ առին ձորի մը մէջ տեղը, ուրկէ մշուշը գուլա գուլա կը բարձրանար. հոն, խրճիթի մը մէջ ամենէն լքուած, ուժապաս ու կոյր պատու մը կը կենար.
— Ո՞վ է աս, աղաղակեց պատուը իր արիւնէ զօրով ու ցածքած շրթութեանը.
— Ես, մամիկ, մահուան հրեշտակն եմ.
— Ի՞նչ, մեռնելուս ժամանակը եկած է:

— Հապա, պատասխանեց հրեշտակը, դուն յաճախ կը գտնուես իր որ քեզ մտայեր եմ. սոսկալի թշուառութեամբ ու չքաւորութեամբ մինչեւ հարիւր տարի ապրեցար, աչքերուդ անշեւ աղաք, հարսերդ գերեզման գրուեցան, թոռներդ ցիր ու ցան եղած՝ բնաւ զքեզ չեն յիշեր: Դուն կոյր ես, բոլորովին լքուած. վերջապէս եկայ, ինչո՞ւ չես ուրախանար:
— Ուրեմն ժամանակն է՞ կեանքէս բաժնուելու. միթէ՞ եկաւ ժամանակը.
— Ոչ... արեց հրեշտակը, Սասունը հրամանաւ ժամ մը եւս ունի ապրելու, ինչ բանի պէտք պիտի գայ քեզի այդ ժամը. կաղաքեմ այդ ժամը ինձի պարգեւէ ուրիշ մը համար, որուն հարիւր անգամ աւելի թանկագին պիտի արժէ քան թէ քեզի: Տես, քովդ ոչ մէկ կենդանի արարած կերեւնայ, ոչ ոք ստանած ձեռքերդ ձեռքերուն մէջ պիտի առնէ, ոչ ոք

աչքերդ պիտի գոցէ, արդէն այնի ծագումն ալ չես տեսնար, ալ ինչո՞ւ գեւ կապրիս:
Ան ատեն պտուռը մէկէն ծուկի եկաւ ու լալով սկսաւ պաղատիլ:
— Չգէ զիս, գոնէ աս ժամուան համար ալ, արդէն ան իմ է. որչափ ալ մոտոյլ ու յուսահատ անցնեմ, բայց եւ այնպէս հոն, ուր վաղը պիտի փոխադրուիմ... աւելի մտայլ ու աւելի յուսահատ է. կաղաքեմ, թո՞ղ, եւ ինձի ճակատագրին սահմանած օրէն կանուխ մի երևար: Մի նակեաց պտուռ մը ի՞նչ ծանրութիւն տուեր է աշխարհին որ չես ուզեր մոտայլ...
Մահուան հրեշտակը նորէն երիտասարդը թեւերուն տակ աննելով թաւաւ աւելի հեռու տեղեր:
Ինքզինքնին գտան նեղ խուցի մը մէջ. փայտէ սեղանին վրայ երկու ճրագ կը վառէր և զալկահար մարդ մը ոտքերը ու ձեռքերը շղթայակապ նստած էր, ան բանալի վանդակաւոր

լուսամուտէն բացողեայ դալարակեղ տարածութիւնը կը զիտէր անյադ աչօք և խոր երեւակայութիւններու մէջ սուղուած էր երբ հրեշտակը յայտնուեցաւ. բանտարկեալը փորձեց ոտքի ելլել, և շղթաները շունգացին:
— Ի՞նչ, կուզես ըսել թէ ժամանակը եկա՞ւ, խեղդուկ ձայնով մը բսաւ բանտարկեալը:
— Ինչպէ՞ս, աս ժամուն շատ կանուխ եկեր ես:
— Այո՛ ճիշդ է. իրաւունք ունիս, ժամէ մը ետքը զքեզ պիտի պատժեն, մայրդ սպաննած ըլլալուց համար, եթէ քու աս վերջին ժամը որ ամենաստատեղիին է՝ ուրիշ րարուած մը չնորհես, որ աւելի պիտի օգտուի անկէ, պատրաստ եմ հիմակունէ քեզ հետս հոն տանիլ. երեւակայէ որ դուրսը կախաղանդ կը պատրաստեն, և անօգին ըսողութիւն մը հետա-

հանդիսականներէն : Կոստովանելով որ Պ. Պէնիան իր գովելի գերին մէջ եղական է, զիտայի է որ, իր սովորութեան համեմատ, նոյն զիշերը չափազանց անանդի կատակներով ժողովուրդը խնդրեցնելով խաղին ազդու սպասուողութիւնը չի մեղմացուց, ու տասնապիսին գերը յաջողութեամբ կատարելով՝ հաստատութիւն ու ճշմարիտ պաշտօնեայի մը տխարը պատկերացուց : Այս ամէնը ըսելէս վերջ կուգիմ նկատել տալ խոսքին յարգելի անդամներուն որ հասարակութիւնը գիտէ միշտ զիրենք հնահատել երբ սովորական խաղերու շարքին մէջ մերթ ընդ մերթ բարոյացից տալաներ ներկայացնելու փոյթը ունենան, ու ասկէ զատ աշխատին իրենց հասարակներուն ալ խնամք տանիլ : Թող փափկանկատութիւններն զիրար տրամ չըլլած եթէ անկեղծօրէն գիտել տալ որ, ժողովուրդին մէջ մասնաորակէ Օր. էլէնի ճիւղակեղէններուն քիչ մը անմաքրութեան նկատմամբ կծու գիտողութիւններ կը շարժան : Իմ կարծիքով որքան որ անդի չի որոյն նոյնօրինակ գիտողութիւններու այնքան աւելի նպաստաւոր է խոսքին յարատեւութեանը, որուն անկեղծ ցանկացողներէն մէկն ալ ես եմ :

— Յայտնի է արդէն ճարտարներն թերթողներուն թէ նոս Արքայանամ մասին մը ունեցանք : Արական եւ իզական ասանձին խոսքերէ բաղկացած Արքայանամին վրայ ճարտարի մէջ օգտակար գիտողութիւններ եղան մասնանկ ընելով քանի մը սխալներ : Բաղադրի ամենէն ազդեցիկ հարց ասանքն ալ այդ բանը կուստիով ուզեցին գրամը պատրիարքարանի միջոցաւ հասցնել Հայաստանի որբերուն : Անանկ կը ընդմարեմ թէ արական մասը այդ օրէն բոլորովին հրապարակէն քաշուեցաւ : Ճշմարտութիւնը ան է որ իզական մասը միայն գոյութիւն ունի ներկային մէջ, եւ որ մէկ երկու անգամ եր ալ կարծեմ գրամ զրկած է պատրիարքարան :

Ամսոյս 14ին կիրակի օր նոր ընտրութեան ձեւնարկուեցաւ իզական Արքայանամը հաստատ հիմերու վրայ գրուելու համար : Որոշ չեմ գիտեր թէ որո՞նք ընտրուած են, միայն փախաքելի էր որ այս անգամ աւելի կարող ու ձեռնառ տրկիններու ձեռքը ըլլար այս տեսակ գեղեցիկ եւ օգտակար գործի մը զեկը, ու այն ասան համոզուած թող ըլլան որ հասարակութեան ամէն մէկ անհատը

քրքրներու մայրապետին կախուելը անանկու համար հասցնել կը սպասեն :

Հիմայ գահիճներդ նեխ պիտի խուժեն եւ քեզի այս նեղ սանդուխներէն քաշքոտելով միջնու կախուղան պիտի տանին... Հոն քեզի կը սպասէ ամենէն անարգ մաշը... Հոն պիտի վերջացնես կեանքդ ամենասոսկալի ու ամենասարսափելի մտնով :

— Կորս է սակից, սովորմով ազդակեց մա՛սպարարը, եթէ համաձայն ըլլա ի կեանքիս ամենաչնչին մասնիկէն բաժնուելու, վազուց զլուխ այս պատերուն գարնելով ջախջախած պիտի ըլլայի : Սակայն ոչ, կուզեմ վերջին անգամ տեսնել պայծառ արեւը, կենսատու առուտարը Դեռ հոն չի գացած, կուզեմ գէթ վայրկեան մը վայելել բնութեան վայելքները ինծի պատմած են որ, իր հայրն ու մայրը սպաննող մը, կախաղանի տակ, չուանը

համարանքով պիտի վերաբերուի իրենց : Ա. օնք քոնէս վերջ, նորնախոր ազնիւ անգամու հիւններուն պիտի առաջարկեմ որ իրենք ալ նախորդներուն պէտք անանց հրապարակու հաշիւ մը ներկայացնելու չի լրացնեն իրենց շրջանը :

— Գրասիրաց եղբայրութեան վարչութեան միտմեայ պաշտօնավարութեան շրջանն ալ լրացած ըլլալով հնդ ժողովը պիտի գումարուի յաստիկայ կիրակի յնվ. 20ին, Շիտակը հիւն ըսենք որ անցած տարուան վարչութեան անդամ երը կրցան օգտակար ըլլալ իրենց պաշտօնին մէջ կեղծած պիտի ըլլանք : Իրողութիւնը սա է որ իրենց նոր գործի գումար անցած ժամանակնուն մէջ ունեցած ետանդով չի գործեցին ու նոր բան մը չուեցաւ իրենցիկ նախկիններուն ըրածին վրայ : Չեմ գիտեր թէ ուրիշ տարիներու պէս այս օնքամալ պիտե՞նի անձկութեան պիտի վերագրուի այս պահաւը, բայց մը որ չար գործերը գիտենք : Հիմակու հիմայ նոր ընտրուելիք վարչութեան օնքաշտօնիւնը կը հրախրենք շէնքին վրայ, որ իր անյարմարութեանը մէջ մէկ հատիկ է, թող չի կարծուի որ ընթերցարանին հայոց թագր ըլլալովը նոյն թագրի բնակիչներուն կօզնեն, ընդհակառակը, հաւց թագրէն յիթերցարան յաճախողները այնքան քիչ են որ բաղդատութեան իսկ չի որոյն ինչ սոսնակ կը կարծեմ որ, եթէ ընթերցարանը կեցողուն տեղ մը փոխադրուի, հասարակ մասին զգալի տարբերութիւն մը պիտի ունենայ, որով եթէ ուրիշներ չեն ուզեր օգտուիլ, գէթ գումարացի պանդուխտները գիտու թիւն պիտի ունենան հոն գիտել եւ օգտուիլ անկէ :

ՅԻՍԷ

ՊՈՒԼԿԱՐԻԱՅ ՁԻՆՈՒՈՐԱԿԱՆ ՈՒԺԸ

Պուլկարիա պատերազմի ժամանակ կարող է թշնամոյն դէմ հանել հետեւեալ ուժերը : Գործօն բանակ՝ 48 գունդ հետեւակ 240,000 սիւն, 20 գունդ ձիաւոր, թնդանթաձիգ և արհեստաւոր զինուոր 30,000 : Պահեստի բանակ՝ կը կազմուի ըզէրվիտներէ

վզին՝ ներման արժանացեր է ինծի ինչո՞ւ չի ներս : Եթէ զիս խաւարչաին անդունդի մը մէջ ձգած ըլլային ու ամբողջ կեանքս ջրով ու ցամաք հացով անցնելու գտատարութիւն, անիկա ինծի սեղի ընդունելի էր քան մեծ ինչ գազաղը... Դէ՛հ, չուտ, հետախոր քովէս, անիծ ես յ ուրուակոն :

Մահապարան յիշողներն ու անէճքները դեռ կը հնչէին հրեատակին թափանցիկ թեւերուն տակ կըծկուած երիտասարդի ականջին, երբ յանարձ ինքզինքը գտաւ շքեղագործ, փոռաւ որ սենեակի մը մէջ, որուն ցեղունէն կախուած վարդագոյն լապտերին մեղմ ցլբերը կը լուսաւորէին թափանցիկ շարժէ վարագոյրին ներքեւ երջանկութեան հեշտուիլը զրկին մէջ թրջուած զոյգ մը սիրոյ ամոլները...

Մանկամարդ կիներ ամենէն առաջ զգաց այս անսովոր տեսիլքը ու նահալեկ հարցուց :

որոնք 30—40 տարեկան են, կամուտը խուճերէ և նոր կանչուած երիտասարդներէ, 20 տարեկանէն վար : Այս բանակը մինչեւ 100,000 հոգի պիտի ունենայ : նպատակն է գործուն բանակին օժանդակել և անոր ուժը պահել :

Այս ուժերէն զատ կան նաեւ աղգային հրատարակները (նարտոն օրըլլէնիէ) : բայց ատոնք աւելի ներքին պահպանութեան պիտի ծառայեն, կատարելով ոտակալական պաշտօն, և հետեւաբար իրբեւ մասնաւոր ուժ չեն համարուիր : Աղգային հրատարակները միմիայն պաշտպանողական կուսներուն մէջ կրնան իրբեւ առանձին ուժ գեր մը ունենալ :

Պուլկարիա զինուած է 180,000 մանիհէրի հրացանով, 100,000 լէպիլի հրացան, 80,000 պէրտան, 30,000 մարթիլի հրացաններով և 720 թնդանթաձիգ բոսթ, քրէզօ և մարսիմ նոր ձեւի արագածիգ հրանետներով :

Այսպէսով Պուլկարիա, պատերազմի ժամանակ, պիտի կրնայ 380 000 սիւն կուսի զաշտը հանել 400,000 հրացանով և 720 թնդանթաձիգ :

Սպառազինութեան արագութիւնը հետեւեալ ձեւով պիտի ընթանայ :

Մինչեւ 8 օր	240,000
" 15 "	300,000
" 30 "	380,000

Խաղաղութեան ժամանակ Պուլկարիա մից զօրարածին (տիվիլիօն) ուսի, ամէն մէկը շորս գունդ հետեւակ, մէկ գունդ թնդանթաձիգ և մէկ գունդ հեծելազօրք : Պատերազմի յայտարարութեան օրը ամէն մէկ զօրարածին զօրարանակի (օրթուս) պիտի վերածուի :

Այս ուժերով Պուլկարիան իր պալքանի գրացիներուն մէջ ռազմական զիրք գրասած է, և Ըոնտաստանի, Մօնթենէրթի և

— Սիրոյ հրեշտակն ես այնպէ՞ս չէ

— Ոչ մահուան հրեշտակն եմ, եկոյ քու ամենարուստ փափաքդ գործադրելու, սիրեցեալիդ ծոցը հանգստացած վայրկեանիդ իսկ՝ կարող եմ քեզ վերցնել ու տանիլ...

— Երկու քիս ալ, այնպէ՛ս չէ :

— Ոչ, միայն քեզ :

— Չեմ ուզեր, մրտաց կիներ :

— Ի՞նչ, ան ասեն ալ չի պիտի ուզես, երբ յայտնեմ թէ ժամէ մը պիտի մեռնիս :

— Ա՛հ, ժամէ մը :

— Այո, այդպէս լծուած է քեզի, այդ ժամուն մինակ պիտի ըլլաս, ի դուր սիրեցեալիդ ձեռք պիտի կարկուտ, Զի կարծես որ կերպոյս, իրողութիւնն է ը անս : Թէեւ մանկամարդ կին մը ըլլաս :

Ի յն ասան կիներ իր ամբողջ մարմնովը գրկեց իր սիրականը եւ սկսաւ կրկնել :

— Չեմ ուզեր մեռնիլ, չեմ ուզեր մեռնիլ, ո՛հ սոսկալի է :

Սիրայիոյ զինուորական զօրութիւնները նստացնելով Բուճանիոյ հետ հաւասար զիրք բռնուած է :

Պ.

Ն Ա Մ Ա Կ Ա Տ Ո Ւ Փ

Ամերիկայի ե. եգիպտոսի չը վճարող բաժանորդներուն. — Կը խնդրենք շտապել բաժնեգրները մինչեւ Փետրուար մէկ անպատճառ հասցնել մեզ : Մինչեւ այդ ժամանակ չը վճարողներուն ալիւս «Շարժում» չի պիտի զբրկուի : Միեւնոյն ժամանակ չը վճարողներուն անունները պիտի հրատարակուի «Շարժում» մէջ :

— Ֆիլիպէ, Հ. Ժիրայր. — Այն ձեռագիրը զոր Տ. Ա. ի միջոցաւ զրկած ըլլալնիդ կը յայտնէք, գեռ չենք ստացած :

ԱԶԳԱՅԻՆ ԲՐՈՆԻԿ

Խիզանի Խակիւ գիւղին վարժարանը վերաբացուի է որ ասկէ 7—8 տարի առաջ զոցուած էր : նպատուց յանձնաժողովը 1 օսմ. ոսկի յատկացուցած է այդ վարժարանին, որուն աշակերտներուն թիւը 40ի կը հասնի և առ այժմ շորս կարգերու բաժնուած են : կուսանին հայերէն և թուաբանութիւն միայն : Այս առթիւ Մարգարեան գրատունը իր հրատարակութիւններէն 200 զըշ. յարժողութեամբ զասաղըրքեր նպատուց յանձնաժողովին տրամադրութեան տակ կը քնէ և կը խոստանայ նոյնքան արժողութեամբ զասաղիրք տալ ամէն տարի, ցորչափ յարատեւ է այդ վարժարանը :

— Կիպրոսի աղգային եկեղեցւոյ մէջ, Ռուսիոյ աղգայիններէն հանգուցեալ Գէորգ Բուրգալեանի, Գրիգոր Զանչեանցի և Խորէն եպիսկոպոս Ստեփանէի համար հո-

իր սիրականը ժպտալով հարցուց. — Ի՞նչ եղաւ քեզի, կերպոյս թանկագինս :

Հրեշտակը գարձեալ շարունակեց : — Յօժար կամքով պէտք է շնորհես ինծի այդ ժամը, որովհետեւ քու քրոջդ օգտին համար է, ան ալ քեզի պէտ անկեղծ սիրել, ու պիտի մեռնի, պիտի մեռնի, ստանց նախապէս տեղեակ ըլլալու :

— Ոչ, այդ անկարելի է յարեց դեռ ասի կիներ, իրու որ, իմ ամենաջերմ բաղձանքներէս մին էր սիրեցեալիս գիրկը հոգիս աւանդել, բայց քանի որ քեզի աչքիս առջեւ կը տեսնամ... կուզեմ ժամուան մը համար ալ ապրիլ նոյնիսկ առանձին ու առանց սիրոյ :

Թատրով, Թ. Յ. Ա. Կ. Տ.

(Շարունակելի)

գեհանգոտեան պաշտօն կատար-
ուել է: Որքանոցին սաներն ալ
մասնակցեր են արարողութեան:
Խորէն Ստեփանէ իր կենդանու-
թեան ժամանակ, անձնականէն
400 րուպի նուիրած և Սիմֆէ-
րոպոլի ազգայիններէն 100 րու-
հանգանակած էր յիշեալ որբա-
նոցին համար:

— Բողոքական ազգայիններ
մասնախումբ մը կազմեր են՝
կրօնական նոր երգարան մը
խմբագրելու և անոր մէջ հայ ե-
կեղեցւոյ հոգեբույժու ու ընտիր
շարականներէն ալ ներմուծելու
համար:

— Աւսումնական Խորհուրդը,
բացառիկ կարգադրութեամբ,
ներկայ տարեշրջանին համար ար-
տօնած է ազգային վարժարան-
ներու մէջ առանց վկայականի
պաշտօնավարող ուսուցիչներու և
ուսուցչուհիներու գոյութիւնը,
պայմանաւ որ յառաջիկայ ամ-
սան գումարելի ուսուցչական
քննիչ յանձնաժողովոյ ներկայա-
նան և օրինական քննութիւնը
անցնելով ստանան ուսուցչական
վկայական, որովհետեւ յառա-
ջիկայ դպրոցական տարեշրջա-
նին բացարձակապէս չի պիտի
կրնան պաշտօնավարել վկայական
չունեցող ուսուցիչները և ուսուց-
չուհիները ազգային վարժարան-
ներու մէջ:

— Անցեալ օր սոսկալի ոճրա-
գործութիւն մը կատարուեր է
տեղւոյս չորրորդ թաղ (Թաշ Եօլը)
տուն մը բնակող հայերու մի-
ջեւ: Սեփաստացի սափրիչ Առա-
քել և Քլեցի ատաղձագործ կի-
րակոս Սարգիսեան իրենց ընտա-
նի քննեցող միեւնոյն յարկին մէջ
կը բնակէին: Ժամանակէ մը ի
վերանհամաձայնութիւնը կը տի-
րէր այդ երկու ընտանիքներուն
մէջ, կանացի բանտարկութեանց
պատճառաւ: Օր մը, մոթ ա-
տեն, սափրիչ Առաքել իր կնոջ
տրտունջներէն գրգռուած՝ կը
սպասէ կիրակոսի գալուն, և երբ
այս վերջինը տան դուռը կը հաս-
նի, դանակի հարուածով մը նախ
գլխէն, յետոյ փորէն կը վիրա-
ւորէ: Ոճրագործը իր կնոջ հետ
ձերբակալուած է, իսկ վիրաւոր-
եալը հիւանդանոց փոխադրուած
է:

Ա Ջ Դ

Արժ Ը. Սարգիս քահանայ Ղարիպ-
եան կանխաւ իր ջերմ շնորհակալու-
թիւնները յայտնելով իր անուան
տօնախմբութիւնը շնորհաօրով փա-
փազողներուն: Կը փութայ իմացնել
թէ պիտի չի կրնայ հիւր ընդունել
սան մէջ տարափոխիկ հիւանդու-
թեան վարակեալ երկու հոգի գրա-
նուելուն պատճառաւ:

—(—)

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Խ Ո Ւ Ր Ք Ի Ա

Բ. Գուռը հազորդի է Ռուսոյ
գեապանին այն կայսերական ի-
րաւէն՝ որ կը հրամայէ արտաքոյ
կարգի գատարանի մը հաստա-
տումը Էրզրումի մէջ: Ռուսոյ
գանդատներուն առիթ տուող
դէպքերը քննելու համար: Այդ
դէպքերն են երեք սպանելու
քիւրտներէն սպաննումը և երկու
կարավաններու յարձակումը:

— Ասկից մէկ երկու ամիս ա-
ռաջ աւաղախութիւն մը Հայկէստան
դէպի Պոլիս և կող թղթատարին
վրայ յարձակելով, սուրհանգակը
և ստիկան զինուորը վիրաւորած
և 30.000 զրուշի շտի գումար մը
յափշտակած էր: Պոլսական թեր-
թերը կրօնացիներէն աւաղախնե-
րէն մէկ քանին արդէն ձերբա-
կալուեր են և գոցցուած գումա-
րին մէկ մասն ալ գտնուեր է:

— Վանայ ծովուն մէջ շոգենաւ
բանեցնել որոշուած և պէտք ե-
լած շոգենաւները զրկուելու
ձեռնարկուած է: Այս կերպով
Պիթլիսի, Էրզրումի, Տիւրպէթի
ճանապարհորդական յարաբերու-
թիւնները մեծապէս պիտի դի-
րանան: Էրզրումէն Վան վեց օրէն
կարելի պիտի ըլլայ վաճառք փո-
խարկել, մինչդեռ իմա 45 օր
կը տեւէ:

Խ Ր Ա Ն Ս Վ Ա Լ

Պօէրները կը շարունակեն նա-
խապատրաստութեամբ յարձա-
կիլ անգլիական ոսկեհանքերուն
վրայ և մեքենաներուն ահագին
փրաս կը հասցնեն: Հանքապահ
զօրքերը շուտով պիտի երթան
հանքերը պաշտպանելու:

— Լօրա Քիշնէրի և Սըր Ալֆ-
րէտ Միլնէրի յարաբերութիւն-
ները խիստ ձգտուած են: Ընդհ-
հրամանատարը շատ դժգոհ է
զաղթականութեան բանակէն, և
ամէն առիթ կը յայտնէ անոր
անբաւականութիւնը: Սրտի ան-
ճարակօրէն ծածկուած ուրախու-
թեամբ մըն էր որ հազորդեց ա-
ռանց գնդակ մը արձակելու
անձնատուր եղող 20 ոստիկան-
ներուն միջոցէպը:

Բայց յարաբերութիւնները ա-
ւելի լարուած են Քիշնէրի և Վար
Օֆիսի միջեւ: Քիշնէր խստիւ կը
պահանջէ օգնական զօրագնդերու
առաքումը, խիստ կոշտութեամբ
իշխանութեանց երեսին կուտայ
իրենց խուլութիւնը ու կը յայտ-
նէ որ պիտի խնդրէ Լօնտօն կան-
չուիլ գործերը կարգի գնելու
համար:

Իսկ Վար Օֆիս Լօրա Քիշնէրը
աւելի պահանջկոտ կը գտնէ քան
թէ գործունեայ ու օգտակար:
Կառարկեն թէ իր տրամադրու-
թեան տակ գտնուած ուժերէն
օգտուել չի գիտել: ոմանք ալ կը

խօսին իր անընդունակութեան
մասին, և կը կարծեն թէ յիմա-
րութիւն է այսքան զժուարին
կուրի մը ուղղութիւնը յանձնել
զօրավարի մը՝ որուն բոլոր անց-
եալը Օմտուրմանի կոտորածը յա-
ջողցնելն էր:

Կը կարծուի թէ թագուհւոյն
թագման հանդէսներէն և խորհր-
դարանին վերաբայուելէն ետքը,
Հարս և Ափրիկի վերին հրա-
մանս տարութեան մէջ փոփոխու-
թիւններ տեղի պիտի ունենան:

— Տօքթ. Լիտս որ այս վայր-
կեանիս Պրիւքսէլ կը գտնուի
կրտէ թէ Քրիւկէրի առողջութիւնը
խիստ գոհացուցիչ է, բայց վեր-
ջերս ձախ աչքին վրայ կատար-
ուած գործողութիւնը հարկ պի-
տի ըլլայ աչին վրայ ալ կրկնել:

Տօքթ. Լիտս յայտնեց է որ
պօէրները երբէք խաղաղութիւն
չի պիտի պահանջեն, բայց թէ,
երբ Սեձն Բրիտանիա այդ իմաս-
տով ստաջարկ մը ընէ, պօէր-
ները զայն նկատողութեան պի-
տի առնեն:

Ձ Ի Ն Ա Ս Տ Ա Ն

Բէքինէն յունվար 27 թուակա-
նա հեռագիր մը մէնէրալ Վալ-
տէրլէի գեապաններուն ներկա-
յացուցած Ձինաստանի միջազ-
գային զօրաց հեռացման յատա-
կագծի մասին՝ հետեւեալ տեղե-
կութիւնները կուտայ:

Չօրաց հեռացումը սկսելէ ա-
ռաջ չին կառավարութիւնը պէտք
է գտնէ խաղաղութեան գաշնա-
գրին կատարման համար քայլ
մը ընէ. կը կարծուի թէ զլիա-
ւոր յանցանորներուն դիւանագի-
տական մարմին պահանջածին
համեմատ պատժուելը և պատե-
րալմական տուգանքին վճար-
ման համաձայնութիւնը բաւա-
կան պիտի համարուին առ այդ:

Սյս պայմանները իրականալէ
ետքը, պիտի սկսուի Բէքինէն
զօրքերը հեռացնել և Փէշիկի
զօրաց թիւը պակսեցնել: Բայց
ասիկա մարտ ամսէն առաջ կա-
րելի չի պիտի ըլլայ: Միջազ-
գային զօրքերը պէտք է գրաւեն
թիւն-Ձինը, Շանկոյի և Քուանի
շրջակայները, մինչեւ որ Ձինաս-
տան ինքզինքը կարող ու պա-
մագիր ցոյց տայ Փէշիկի մէջ
կարգը պահպանելու և օտարները
պաշտպանելու: Ընտոյ Վալտէրլէ
կը նշանակէ թիւը այն զօրքե-
րուն՝ որոնք պիտի մնան գեապա-
նատունները, երկաթուղիները
և մէկ քանի քաղաքներ պաշտ-
պանելու համար:

Այս յատակագծին կից նամակի
մը մէջ մէնէրալ Վալտէրլէ կը
յայտնու թէ՛ պէտք է մէկ տեղի
մէջ միայն մէկ ազգութիւնէ զօրք
ձգել և ընդհ. հրամանատա-
րութիւնը տարուէ տարի տարբեր
ազգութեանց յանձնել:

Հակառակ սակայն այս յա-

տակագծին, գերմանական զօրա-
խումբ մը ամսուան մը պաշարով
ճարտական յառաջապահ խումբի
մը առաջնորդութեամբ, Բէքինէն
Շանկի մեկնեցաւ: Կերեւայ թէ
գերմանական զօրքերը հիւսի-
սային Ձինաստանէն քաջուելու
միտք չունին, որովհետեւ հրա-
հանգ տրուած է ամառային հա-
զոտաներ հայթայիթել գերման
զօրքերուն:

— Շանկայէն այլ և այլ լուրեր
կը հասնին: Նախ կիմացնեն Պու
Ձէտի և զօրավար Շանկիէնի
մահը: Յետոյ, Շանկայ Քուանի
մէջ պայթում մը տեղի ունեցեր
է չինական վառօդարան մը ոչըն-
չացուցած ատենին: 40 ճար-
նացի և երկու անգլիացի վիրա-
ւորուեր են:

— Շանկայէն կը հեռագրեն թէ՛
գեապանական մարմինը փետր-
վին գումարում մը աւնեցած է,
որ որոշուեր է սուստոյ ենթար-
կուելիք պօստերնու գանկը:
Որոշուած է որ գեապանները չի
պիտի պնդեն իշխան թուանի,
Թանկ Պու Սիանկի և Տիւր Լանի
մահուան ենթարկուելուն մասին,
և թէ Միացեալ Նահանգները ի-
րենց դիւանորութիւնը չի փո-
խեն:

— Շանկայ, 29 յունի: — Բէ-
քինէն կը հեռագրեն «Նորա
Չայնա Տէյլի Իլլի» թէ՛ Լի-
Հունկ-Չանկ սաստիկ տենդէ կը
տառապի: Ապաքինումը տարա-
կուսելի է: Չուանկ և Եու-Հօիէն
յունուար 27-ին զլիաատեցաւ:

Պ Ո Ւ Լ Կ Ա Ր Ի Ա

Եւրոպական թերթերը կը գրեն
թէ՛ իշխան Պէրտինանտի Անգ-
լիոյ թագուհւոյն յուլարկաւորու-
թեան ներկայ գտնուելու դիտա-
ւորութեանէն ետ կենալը կապա-
ցուցանէ երկրին խիստ փափուկ
վիճակի մէջ գտնուիլը: Բոլոր
կուսակցութիւնները, սպասա-
կան թէ պահպանողական, լաւ-
եայն համաձայնած են դէմ կե-
նալ ամէն կերպ ճնշիչ (միջոց-
ներու, երկրին սահմանա-
գրական ապառուժիւնը անվար
պահելու համար: Այս պատճա-
ռաւ ընտրութեանց միջոցին ան-
կարգութեանց ծագումէն կը
վախցուի զի պայքարներու եւ վաշ-
տերու միջեւ:

— Սօֆիայէն կը գրեն թէ՛
անցեալ երկուշաբթի մեծ հան-
գէտով կատարուեր է երկտրա-
շարժ թրամուէյններու երթուե-
կութեան բացումը: Գրեթէ բոլոր
նսխարարները ներկայ գտնուեր
են կեդրոնական կայարանին մէջ:
Առաջին բանող վակոնները գափ-
նիներով զարգարուած էին: 120
հոգինոց սեղան մը տրուեր է
նոյն օրը կեդրոնական կայարա-
նին մէջ: